

նորագոյն ստեղծագործութիւններէն: Միւս կողմէ, Եւրոպացի «Բազմավէպ»-ի միջոցաւ է որ ծանօթացած են հայ անցեալին և մշակոյթին, շնորհիւ մասնաւորաբար անոր էջերուն մէջ մերթ րնդ մերթ լոյս տեսնող օտար լեզուով հայագիտական յօդուածներու: Այդ ուղղութեամբ ալ մեծ է եղած իր վաստակը և ի դուր չէ որ կը վայելէ մեծ վարի օտար հայագիտական լուրջ շրջանակներու մէջ:

Անոր քանի մը տասնեակ հազարներու հասնող էջերուն մէջ, ամբողջ հարիւր տարիներ, լոյս տեսած՝ օրինակելի ճշտապահութեամբ ու ճաշակով, ամբարուած են զրական, պատմական, բանասիրական, գիտութեանց և արուեստներու վերաբերեալ այնքան առատ նիւթ, որ եթէ զանոնք ի մի հաւաքելու փորձն ուզէինք ընել, պիտի ունենայինք այսօր հսկայական գրադարան մը՝ ստուարաթիւ հատորներու, մէկը միւսէն արժէքաւոր, ուր իրենց մտքին ցոլին ու սրտին հուրն են զրած շքեղ փաղանգրազգին մոտաւոր առաջնութեայ դէմքերուն, գլխաւորութեամբ Ալիշաններու, Բազրատունիներու, Հիւրմիւզներու, Ազերեաններու, Քաջունիներու, Զարբաշաններու, Սարգիսեաններու, Ղազարկեաններու, Հասունիներու, եւլն, եւլն:

Ան, հարիւր տարիներու իր գործունէութեան ընթացքին, թողած է մտքի և աշխատանքի այնպիսի խոր հետքեր իր ետին, որ անկարելի է որ կորսուին: Անոնք արժանի են սերունդներու յարգանքին և գնահատանքին:

Ոչ մէկ թերթ մեր մէջ «Բազմավէպ» է զատ, — նոյնիսկ եւրոպական շատ մը ազգերու մէջ —, չէ ունեցած ամբողջ զարմը կանոնաւորաբար լոյս տեսած ըլլալու անսովոր պատիւը: Եւ թող չափազանց չթուի, երբ ըսեմ թէ «Բազմավէպ»-ն առանձինն ճակատաբաց կարելի է հակադրել եւրոպական մէկէ աւելի ազգերու լրագրութեան ամբողջութեան, ըլլայ իր տարիներու թիւով, ըլլայ բովանդակու-

թեամբ: Ասիկա սովորական՝ պզտիկ պատիւ մը չէ անոր անխնայ հրատարակչներուն, ինչպէս նաեւ ազգին համար՝ որուն կը պատկանի:

Եւ ինչ որ կարելի չէ այսօր առանց մասնաւոր հաճոյքի և հպարտութեան վերջառել, այն է թէ «Բազմավէպ»՝ հակառակ ներկայ պատերազմի արհաւիրքներուն և զրկանքներուն՝ կանգնած է իր երկրորդ փառաւոր դարադարձի սեմին աւելի ներոյժ ինքնավստահութեամբ մը, յարատեւելու աննկուն կամքով, աւելի կենսունակ և առոյգ:

ՆԵՐՍԷՍ ԳԱՍԱՊԵԱՆ

Փոփոխ, 1943.

ՀԱՅԿԱՍՏԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱՌՈՂԻԿՈՍԻ ՅՈՒՆԵՍԿՈՒՆԸ

ՓԱՐԻՋԻ ՄԷՋ

Յունիս 5-ի Շարաթ դիւեր տեղի ունեցաւ Սոր-պոնի մեծ Ամփիթատրոնի մէջ Կիլիկիոյ Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեանի ծննդեան եւ զրական դործունէութեան 80ամեայ Յորեւանի պաշտօնական հանդէսը՝ խուռն ընդմիջեալ մը ներկայութեան: Կը նախագահէր Արտաւազդ Արքեպոս. Սիւրմէեան Կաթողիկոսական Պատուիրակ, որ հանդէսը բացաւ զրուստալից խօսքերով՝ ուղղուած սրբազան Յորեւանին: Հետզհետէ տեղի ունեցան երգեր, արտասանութիւններ, որոնց ընթացքին խօսք տուին Պրն. Զօպանեան, յիշելով բազմակողմանի դործունէութիւնը իր գիտնական ու եկեղեցական: Մեսրոպ Գուլումեան Կիլիկեան Ընկերութեան կողմէ, որ համակ եռանդ կարած չեւեց Անթիլիասի վանքին սպաղայ դերը, որ կրնայ ունենալ ազգային կեանքին մէջ: Զորբորդը եղած է Շահէ արեղայ Աճեմեան, որ մասնաւորապէս Անթիլիասի վանքին մէջ պատրաստուած եկեղեցականներ հասցնելու պէտքը, փառաբանելով իր ուսուցիչ Կաթողիկոսին գիտական եւ քարոզչական արժանիքները:

Հանդէսին զրեթէ կէսին, հասաւ խումբ մը

աշակերտներով Հ. Սահակ Վրդ. Տէր-Մովսէսեան, որուն անունը թէւեւ նշանակուած էր յայտադրին մէջ՝ ճառախօսներու կարգին, սակայն ժողովը՝ զեան բուն փափաքը ստիպեց քանի մը խօսքեր արտասանելու:

Հոս կը դնենք նոյնութեամբ այն համառօտ խօսքերը զոր Հ. Սահակ Վրդ. իր ներկայացուցիչ Սեւրի Մուրատեան վարժարանի՝ շուրջ հինգ վայրկեան արտասանեց այդ առթիւ:

«Ինձմէ առաջ — ըսաւ ան — բազմաթիւ հաւաքներ երկարօրէն ծանրացան գիտնական Յորեւանի կեանքին, եկեղեցական ապարդիւն եւ գրական գործունէութեան վրայ, այնպէս որ ես — որ չեմ սիրեր կրկնութիւններ ընել —, կանգ պիտի առնեմ միմիայն էական կէտի մը վրայ, որ երբեք այստեղ չշեշտուեցաւ:

Յայտագրին վերջը մանրատաւ գրուած է, քէ Կաթողիկոսը կ'ուզէ դարձնել Անթիլիասը երկրորդ վեներիկ մը, որ է ըսել հայ մշակոյթի, հայ գրի եւ հայ գրականութեան կեդրոն մը, որուն վրայ Միջքարեան Միաբանութիւնը միայն կրնայ համակրանքով նայիլ, մանաւանդ այս ցաւալի կացութեան մէջ, ուր հայ ժողովուրդը ցիրուցան աշխարհի չորս հովերուն, կորսնցնելու վրայ է մայրենի լեզուին հետ նաեւ ազգային արժէքները, որոնցմով ազգ մը կրնայ տեսական դառնալ: Արդարեւ հայոց հին վանքերը եղան միշտ գիտութեան եւ արուեստի մեծ կեդրոններ, տեսակ մը համալսարաններ: Վանքերէ՛ն է որ դուրս ելան նշանաւոր կաթողիկոսներ, գիտնական վարդապետներ, բազումներու խորհրդականներ, համարակալներ եւ կարգ մը ուրիշ ակամաւոր դէմքեր: Եթէ ամէն քաղաքակիրք ազգ պէտք է մեծ յարգանք եւ սէր ունենայ դէպի վանքերը իբրեւ յարգանք եւ սէր ունենայ դէպի վանքերը իբրեւ իր ազգային մշակոյթի առաջին կեդրոններ՝ եւս իր ազգային մշակոյթի առաջին կեդրոնները, իր գեղարուեստը կը պարտի իր հոյակապ կայքը, իր գեղարուեստը կը պարտի իր հոյակապ վանքերուն: Առանց այդ վանքերուն, կարելի է ըսել անվարան կերպով՝ քէ հայկական մշակոյթը զարեթով եւ մնացած պիտի ըլլար: Եթէ Միջքար Արքեպոսը Հիմնադիր «Առաջին» վեներիկին, յաջողեցաւ օտար հողի վրայ կառուցանել իր հոյակապ գործը եւ դարձնել զայն Եւրոպայի եւ հայոց ազգին, հայ լեզուին, հայ մշակոյթի առաջնակարգ կեդրոն մը, կը համարիմ որ Անթիլիասի վանքը որ ծրագրած է ըլլալու երկրորդ վեներիկ՝ աւելի նպաստաւորուած պիտի ըլլայ այն տեսակետով՝ որ նա շրջապատուած է հայ ժողովուրդի հոծ գաղութներով, որոնք պիտի ուզեն օգնել նկարագրել որ այդ երկրորդ վեներիկը իրողութիւն մը դառնայ: Եթէ առաջին վեներիկը

յաջողեցաւ հայութիւնը ֆանչցնել իր ամբողջ կատարելութիւններով Եւրոպայի, եւ Եւրոպան հաւաքեցաւ, ստեղծելով համակրութեան լայն հոսանքներ դէպի հայ ժողովուրդը, կը համարիմ որ Անթիլիասի վանքի դերն ալ պիտի ըլլայ հայութիւնը ֆանչցնել արաբական աշխարհի եւ արաբական աշխարհը հայութեան:

Հ. Սահակ Տէր-Մովսէսեանի խօսքերը վերջացան բուն ծափերու մէջ: Իրմէ յետոյ Պատուելի Պրոֆ. Խայկեան փափաք յայտնելով քանի մը խօսք ալ ինքն ըսելու իր Հասարակութեան կողմէ, հրաւիրուեցաւ ըսել. նա սրտանց խօսեցաւ Յորեւան Կաթողիկոսին կատարած հսկայ դրական աշխատանքի մասին եւ երկար կեանք մաղթեց անոր որ կարենայ իր գործը վերջացնել:

ՆԵՐԿԱՅ ՄԸ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԽՄԲԱԳՐԻ

Ազգի առջեւ ունենալով Հ. Սահակ Տէր-Մովսէսեանի արտասանած հարազատ խօսքերը, այժմ մեզի խիստ զարմանալի կը թուի թէ ինչպէս Փառեւաճայ Երկու-թերթեր թուրքովին տարբեր լուստով եւ իրենց ճաշակին համաձայն խեղաթուրած են բանաստեղծ վարդապետին յայտնած միտքերը: Այսպէս «ԱՐԵՒԻՄՈՒՏՔ» հետեւեալ բաները կը դնէ.

«Յարգելի Միջքարեանը վեր առաւ հայ եկեղեցիին կատարած դերը ազգապահպանման մէջ. օրինակ բերաւ վեներիկի վանքը, որ այնքան մեծ հմայք մը ունի օտարներու աչքին բարձրացնելու համար հայ մշակոյթին եւ քաղաքակրթութեան արժէքը, ու սրտանց յաջողութիւն մաղթեց գործին»: (Արեւմուտք, Յունիս 13, թիւ 76):

Ուրիշ մը «ՅԱՌԱՋ»-ը (տես՝ Յունիս 14) եւ «ՀԱՅՐԵՆԻՔ»-ը (տես՝ Յունիս 24) այսպէս կը յիշատակեն իրարմէ անհեղինակ.

«Խօսք տրուեցաւ Միջքարեան Միաբանութեան ներկայացուցիչ եւ Մուրատեան վարժարանի Տրոֆիմ Տ. Սահակ Վրդ. Տէր-Մովսէսեանի եւ Հայ Աւետարանական Համայնքին Փրօֆ. Խայկեանին: Երկուքն ալ փառաբանեցին գիտուն եկեղեցականը, շեշտեցին անոր վիճակուած դերը Անթիլիասը դարձնելու դպրութեան կանաւի մը, հասցընելով պատրաստուած եկեղեցականներ եւ տալու արդիւն փափի տարիները»:

Իսկ Անթիլիասի պաշտօնաթերթը «ՀԱՍԿ» (Յունիս-Յունիս, թիւ 6-7, էջ 190) տեղեկագրութեամբ Շահէ արեղայի, գիտութեան խեղաթուրում մը կատարած է որ իրեն երբեք ներքին չէ: Ան կ'ըսէ.

«Յետոյ խօսքը տրուեցաւ Հ. Սահակ Տ. Մովսէսեանի Տեսուչ Մխիթարեան վարժարանի, որ ցոյց տուաւ քէ ինչպէս մեր վանքերը միշտ եղած են մեր համալսարանները, ինչպէս վեներտիկ, եւ քէ ինչ հսկայ գործ են կատարած անոնք գրական եւ պատմական: Վեներտիկը, սակայն, չունեցաւ հայ ժողովուրդին սիրտը իրեն հետ, որովհետեւ օտարներով է շրջապատուած, Անթիլիասը ունի գայն եւ անոր համար կոչուած է գերազանցելու վեներտիկը»:

Մեզի իսկապէս զարմանալի կը թուի որ ինչպէս կարելի է Հ. Սահակ Տէր-Մովսէսեան մը, որ երկար տարիներ ապրած է հայ ժողովուրդին մէջ եւ մօտէն չի տեսած անոր խաւերուն հետ, կարենայ այդ բնական արտայայտել «չունեցաւ հայ ժողովուրդին սիրտը իրեն հետ»։ մինչ միեւնոյն վարդապետը աւելի քան որ եւ է մէկը զիտէ թէ ինչպիսի՛ եռանդուն եւ անկեղծ սիրով հայ ժողովուրդին սիրտը կապուած է ոչ միայն Մխիթարեան Միաբանութեան հետ՝ այլ նաեւ անոր վարած բոլոր Հաստատութեանց հետ: Օգտուելով առիթէն կ'ազդարարենք ազգային թերթերուն որ խղճամիտ դռնուին բանաստեղծներու խօսքը ճշգրտօրէն առաջ բերելու եւ ոչ թէ շահագործողական նպատակներով դանդաղ անճանաչելի դարձնել: Մենք վստահ ենք որ եթէ Հ. Սահակ Տէր-Մովսէսեան այդպիսի ձախուեր նախադասութիւն մը արտասանէր՝ ամբողջ հայ ժողովուրդը ոտք ելած պիտի բողբոջէր իր սխալ թարգման իր հարազատ զգացումներուն:

ՀԱՅԿԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԸ

ՊՈԼՈՆԻԱՅԻ ՄԷՋ

Սեպտեմբեր 19-ի Կիրակի առաւօտն է. Պոլոնիայի աթոռանիստ Մայր Տաճարէն շքեղ թափօր մը կը մեկնի՝ արեւու պայծառ շողերով օծուն:

Քաղաքն ամբողջ հոն է, շուրջը, զմայլած ու աղօթաւոր:

Քառասունէ աւելի Արհալ. Արքեպիսկոպոսներ Իտալիոյ դանադան թեմերէն, հայրապետական հանդերձներով ու վեհաժողովով, Յոյն եւ Սլաւ երկու արքեպիսկոպոսներ իրենց արեւելեան դիւթիչ զգեստներով ու երեք Վսեմ. Ծիրանաւոր կար-

դինալներ, անհամար կղերիկոսներու դասով, մոմերով ու խուկնով կը յառաջանան դէպի մերձաւոր մէկ ուրիշ հսկայաշէն եկեղեցին՝ Սան Փեղրոնիոյ:

Հոն պիտի մատուցուի Հայկական Ս. Պատարագը:

Վսեմ. Ծիրանաւոր Գրիգոր Պետրոս ԺԵ Աղաճանեան Կաթողիկոս-Պատրիարքն է օրուան անմահ ժամարարը, որ սիրայօթար յանձն առած էր մասնակցել հանդէսին՝ Պոլոնիայի Արհալագատու Ծիրանաւորին աղնիւ հրաւէրին համաձայն:

Պոլոնիայի արքեպիսկոպոսարանը մեծահոգի հանդէսներ սարքած էր Սեպտեմբերին՝ քրիստոնեայ եկեղեցիներու միութեան ի նպաստ: Բաղմաթիւ ճառախօսութիւններ, խորհրդակցութիւններ, արեւելեան դանադան ծէսերով արարողութիւններ, նոյնիսկ դեղարուեստական-երաժշտական ներկայացումներ դեղեցիկ կերպով հիւսուած էին ամբողջական ծրագրին մէջ, Արեւելքի եւ Արեւմուտքի մերձեցումին օգտի մը ստեղծելու նպատակով:

Հայկական Ծէսը հանդէսներու վերջին օրուան վերապահուած էր: Այդ առիթով Ս. Ղազարու վանքէն ամենաճոխ հայկական զգեստներ եւ արարողութեան կարեւոր սպասներ փոխադրուած էին Պոլոնիա:

Հայերու խումբը ամէնէն հանդիսաւորն ու շքեղն էր անձայր թափօրին մէջ:

Առջեւէն դպիրներ, ապա ութը սարկաւազներ, Մխիթարեան միաբան Հայրերէն, որոնցմէ երկուքը սաղաւարտով եւ փաթթոցաւոր ոսկեհոն ուրարներով. ապա կու գային Արհալ. Պետրոս Արք. Քէտիճեան, Արհալ. Կիւրեղ Արք. Զօհրապեան, Արհալ. Գերալ. Սրապիոն Վ. Ուլուհոճեան՝ Վեներտիկի Մխիթ. Միաբանութեան Ընդհ. Արքահայրը, ամէնքն ալ հայրապետական վեհ զգեստներով, որոնք Ս. Պատարագի միջոց անձամբ կատարեցին Աւետարանի թափօրը, Ս. Աւետարանին ընթերցումը եւ Վերաբերումը:

Ամէնէն վերջ կու դար ինքը Գերեթ. Վսեմ. Հոգեւոր Տէրը, ազնուամայլ դրնացքով, «Նազելի փառքով զգեստաւոր-

ուած» երկնամաս շուրջառով. երկու կողմերն էին Գերալ. Գր. Մ. Վ. Ինճէեան եւ Գերալ. Յակոբ Մ. Վ. Կիրակոսեան՝ իրենց կաթողիկոսական առնթերակներ:

Արձաթ փողերու յաղթական երգերով մտանք սուրբ տաճարը:

Շուտով լեցուեցաւ. 20,000-ի մօտեցող բազմութիւն մը ծովացաւ եկեղեցիին մէջ. ամէնքը կ'աղօթէին Ս. Ղազարի կոչումով Տիրամօր Ս. Աստուածածնի հրաշագործ պատկերին առջեւ, երկիւղածութեամբ աշխարհի խաղաղութիւն, սէր եւ եկեղեցւոյ պայծառութիւն աղերսելով, մինչ բեղուն Հայ Հայրապետը կը բաշխէր խաղաղութեան ողջօյնը եւ սարկաւազներու դասը միաբան «Վսեմ խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոյ Եկեղեցւոյ» կ'ազգայէր:

Դաշն երգեցողութեամբ կը յառաջանար արարողութիւնը:

«Հաւատամք»էն վերջ նշանակալից ու լայնարձակ արարողութիւն մը կատարուեցաւ. բոլոր ներկայ եպիսկոպոսները, իրենց հայրապետական զգեստներով մի առ մի Ս. Սեղան բարձրացան ստորագրելու համար Հաւատքի դարաւոր Հանդանակին:

Հին դարերը կարծէք նորէն կ'անցնէին մեր առջեւէն կամ Նիկիոյ ու Նիքիոսի Ս. Ժողովներուն օրն ըլլար, այն երջանիկ Ս. Ժողովներուն օրն ըլլար, այն երջանիկ Ս. Սեղան բարձրացան ստորագրելու համար Հաւատքի դարաւոր Հանդանակին:

Արարողութիւնը կը յառաջանայ, կը մտնայ սրտածմբիկ պահը. հրեշտակային «Սուրբ Սուրբ»ը կը լսուի ու ներկայները՝ հետեւելով խաղերէն լեզուով երբեմն երբեմն կատարուած հակիրճ թելադրութիւններուն՝ խորին երկիւղածութեամբ կ'երկրպագեն անճառ Ս. Խորհուրդին:

«Ի սուրբ, ի սուրբ»էն վերջ երկրորդ անգամ կը ձգուի վարագոյրը, զոր յատկապէս պատրաստած էին մեզի համար, հակառակ անսովոր բան մը ըլլալու լատին աշխարհի մէջ:

Բացուելուն՝ հիստօրիկ շուրջ մը տաճարածուցաւ տաճարին մէջ. Գերեթ. Հոգեւոր Տէրը իր արձաթ երկնային ձայնով կ'երգէր վերջին աղօթքներն ու Ս. Աւետարանը, շուրջն ունենալով ամբողջ սարկաւազներու պարը Սեղանի աստիճաններուն վրայ. շատեր այդ պահուն յափըտակուած զմայլանքի խօսքեր կը տեղային:

Աւարտելուն, Վսեմ. Կարդ. Աղաճանեան դարձաւ բարձրացաւ աջակողմեան դասին վրայ շրջապատուած իր սարկաւազներէն, ճիշտ դիմացն ունենալով ուրիշ դահլորակի մը վրայ բազմած ներկայ երեք Վսեմ. Ծիրանաւորները, Արհ. Նազարի Ռոքքա Տի Գոռնիկանոյ՝ Պոլոնիայի վիճակաւոր Արքեպիսկոպոսը, Արհ. Եւդիմիոս Թիսուրան եւ Արհ. Ռոֆֆինի. այդ պահուն շորհաւորութեան եւ յարգանքի տրիտուր ներկայացուցին ներկայ բարձրաստիճան եկեղեցական ու քաղաքական անձնաւորութիւններ:

Նոյն օրը կէսօրէն վերջ, հսկայական թափօր մը տեղի ունեցաւ, որ շուրջ 3 ժամ տեւեց եւ որուն կը մասնակցէին նաեւ բոլոր ներկայ արեւելցիները. անձան հանդէսով Ս. Աստուածածնի հրաշագործ նկարը քաղաքին եկեղեցիէն փոխադրուեցաւ իր բնիկ ուխտավայրը, աղօթքներով, անդադար երգերով ու սաղմոսներով:

Սեպտեմբերի մատրան մէջ, Պիոս ԺԲ. Սրբազան Քահանայապետի մասնակցութեամբ կատարուած Հայկ. Պատարագէն վերջ (12 Մարտ 1946), այս տարուան Պոլոնիայի մէջ տեղի ունեցած մեծահոգի հանդէսները, ուր ա'յնքան փայլեցան արեւելեան ծէսերն ու դիւթիչ արարողութիւնները, անգամ մըն ալ կու դան հաստատել թէ ներկայիս Արեւմուտքիները ինչպիսի՛ յարգանք եւ սէր կը տածեն Արեւելեան եկեղեցիներու նուիրական աւանդութիւններուն հանդէպ:

Երանի՜ թէ մեր մէջ ալ համերաշխութեան ոգին լրջմտութեամբ համակուած՝ բոլորովին անհետացնէր հինցած մտայնութիւնները, եւ շուտով ծագէր երջանկաբեր աստղը տիեզերական եկեղեցւոյ հորիզոնին վրայ:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ